

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱԽՆ ԼՈՒՍ. ՁՈՉ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏ—ՍՈՑ. ԴԱՍ. ԳԼԽ. ՎԱՐՉ.

ԱՇԽ. Ա. ԱՍՏԻՃ. ԴՊՐՈՅԵ ԳՐԱԴԱՐԱՆ


ԲՆՈՒԹՅՈՒՆ և ԱՇԽԱՏԱՆՔ № 13
Խմբ. Մ. Զառաֆյանի յեղ Ա. Արարատյանի

Կ Ո Վ Ի Կ Ե Ր Ը
= Յ Ե Վ =
Ւ Մ Ա Մ Ք Ը



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Մ 6 — 1 9 2 7



ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՄՏԻՑԱՆԻ ԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

✓

№ 13 «ԲՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔ» № 13
Խմբ. Ա. Զառաֆյանի յեվ Ա. Արարատյանի

636.2.085

Կ-

Լրաց.


636.2.083



ԿՈՎԻ ԿԵՐՆ ՈՒ ԻՆԱՄՔԸ

A 1
3889

==



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Տ Ե Ր Ե Վ Մ 6 - 1 9 2 7

Գրաւես. 369 լ.

Հ. 626

Տիրաժ 6.000

Պետհրատի լեռկըռըդ տպարան Յերևանում—1147

I. ՄԵՐ ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Շատ հին ժամանակներում, մեզանից հազարավոր տարիներ առաջ մարդիկ վայրի կենդանիների նման ելին ապրում և նրանցից վոչնչով չելին տարբերվում։ Որերով մագլցում ելին ծառերի կամ ժայռերի վրա՝ պտուղ ու թռչունի բուն գտնելու։ Յեթե յերբեմն ել նրանց հաջողվում եր մի կենդանի վորսալ, ապա դա նրանց համար մի կատարյալ տոն եր լինում։

Հետագայում, յերբ նրանք սովորեցին քարից և փայտից զենքեր պատրաստել, արդեն ավելի հաջող ելին վորս անում և ավելի խոշոր կեսդանիներ ելին սպանում։ Սակայն վորս անելըն այնքան ել հեշտ բան չե և վորսի հաջողությունը շատ պայմաններից ե կախված։ Յեզ մարդիկ այդ շրջանում շատ վողորմելի կյանք ելին վարում։ Որերով ու շաբաթներով քաղցած ելին մնում և մի քանի պտուղի համար իրար հետ կռվում։ Իսկ յերբ հաջող վորս ելին ունեցում, պայթելու չափ ուտում ելին այդ վորսի

միուր և վաղվա որվա ծասին չելին մտածում:
Պարզ է, վոր այսպիսի կյանքն անապահով է:
Մարդն այդ ժամանակ ամբողջապես կախված
էր ընության պատահականություններից:

Ավուի ուշ ժամանակներում մարդիկ սկսեցին կենդանիների մատադ ձագերը վորսալ և
պահել, և արդպիսով մի շարք կենդանիներ ըն-
տելացրին: Այժմ նրանք շատ ավելի ապահով ելին քան առաջ. հաջող ժամանակ վորս ելին
անում, իսկ բաղցած ժամանակ իրենց հոտերից
մի քանի կենդանի մորթում և իբր կեր գործ
ածում: Ասսպիսով խաշնարածությունը մարդ-
կանց ընության կախումից մի փոքր ազատեց:

Անուհետեւ մարդիկ շատ ու շատ կենդանի-
ներ են ընտելացնում, վորոնցից ամենազլիա-
վուներն են տավարը, վոչխարը, ձին, խողը,
շունը, կատուն:

Ներկայումս այդ կենդանիներից մի քանի-
սին մօրդ պահում է հատկապես նրա համար,
վոր իր ունեցած անգործածելի բուսական և
կենդանական մթերքներն այդ կենդանիների
միջոցով միու, կաթ, բուրդ, կաշի, զոմաղը և
աշխատանք դարձնի:


Ոյդ մի քանի կենդանիները կոչվում են
զյուղատնտեսական կենդանիներ: Դրանք են՝
տավարը, վոչխարը, ձին, խողը:

Գյուղատնտեսական կենդանիների տված
ոգուտները շատ շատ են: Նրանց աշխատեցնում
են և նրանցով բեռներ են տեղափոխում: Նրան-
ցից ստանում են միս, ճարպ, կաթ, կաշի,
բուրդ, գոմաղբ: Նույնիսկ նրանց այն մասերը,
վոր անպետք են թվում, մարդիկ զանազան
նպատակների լեն գործադրում: Վոսկըներից և
ջլերից սոսինձ և զանազան աղեր են ստանում:
Աղիքներից լերշիկի համար խողովակներ են
պատրաստում: Վոսկըները, չորացրած փորոտի-
քըն ու արյունը մանրացնելով իր կոնդանինե-
րի կեր կամ պարարտանյութ են գործ ածում:
Յեվ յեթե մի փոքր մեր շուրջը դիտենք և մաս-
ծենք, կտեսնենք, վոր, առանց զյուղատնտեսա-
կան կենդանիների, մարդը վոչ տնտեսապես և
վոչ ել կուլտուրապես զարգանալ չեր կարող:

2. Կ Ո Վ

Գյուղատնտեսական կենդանիներից վոչ մե-
կը մեր գյուղացու առորյա կյանքում այնպիսի
նշանակություն չունի, ինչ զես կովը Մեր զյու-
ղացին միս շատ քիչ ե գործ ածում՝ այն ել
կամ մեծ առն պիտի լինի կամ տավարը վիրա-
փորված ու հիվանդ պիտի լինի, վոր մորթի-
կովն ե, վոր նրան կաթ ե տալիս. մարդն ել

կաթից մածուն, շոռ, կարագ, լուղ, պանիր,



Նկ. 1 Ցուլ

թան պատրաստելով կամ թարմ դործ ածելով,
իր կերակուրը բազմազան և սննդարար է դարձ-
նում:

3. ԿԱԹՆԱՏՈՒ ԿՈՎԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Տեսնենք, թե ինչ են ասում դիտնական-
ները կաթնատու կովի մասին։ Դիտնականները
կենդանիների և թռչունների վրա շատ փորձեր
են արել։ Նրանք սի քանի կենդանիներ են ջո-
կել, հաշվով կեր են տվել և նրանցից ստացած
մթերքն ել չափել են։ Այդ փորձերը ցույց են
տվել վոր արդյունքի չափը կախված է կերի
քանակից և կենդանու տեսակից։

Այսպես 100 կիլո մարսվող կերի դիմաց

կովը ավելի ե 139 կ.	կաթ,	կորի մեջ 18 կ.	Հող նյութ կա
կոկը	» 25 »	միւ հճամլող »	» 15,6 » » »
չորթը	» 36,5 »	» » »	» 8,1 » » »
թոշունը	» 19,6 »	ձու	» » » 5,1 » » »
գառը	» 9,6 »	միւ	» » » 3,2 » » »
զեղը	» 8,3 »	»	» » » 2,8 » » »
վաշիւ. ավելի ե 7,0 »			» » » 2,6 » » »

Յեթե այս թվերն ուշադրությամբ կարդանք ու համեմատենք, կտեսնենք, վոր ամենից ձեռնու կենդանին կաթնատու կովն եւ նա 100 կիլո մարսվող կեր ուաելով, 139 կիլո մթերք

և տալիս, վորի մեջ 18 կելո չոր նյութ կտ
(մնացածը ջուր է): Խոզն եւ բավական ոզտա
կար ե թեև վոչ կովի չափ: Իսկ մնացածները
կովից շտո յետ են մնում:

Տնտեսական տեսակետից ամենաոգտակար
կենդանին, մանավանդ մեր զյուղացու համար,
կաթնառաւ կովն է:

4. ԿՈՎԻ ԱՐՏԱՔԻՆԸ ՅԵՎ ԿԵՆՑԱՆԸ

Կովը բավական խոշոր կենդանի յեւ: Նա
մնիում ե բուսական նյութերով: Կովը ստիպ-
ված ե շատ ուտել, վորովիճետի բուսական նյու-
թերի մեջ այնքան սնունդ չկա, վորքան կեն-
դանական նյութերի մեջ: Յեթե կովի նման մեծ
կենդանին խոտիցո-
ղունները հատ-հատ
կտրեր, նա հաղիվ
թե կշտանար, այդ
պատճառով եւ նա
խոտն ամբողջ փրն-
ջերով ե պոկում:
Նրա լեզուն բավա-
կան յերկար է,
ուժեղ և անհարթ:
Կովը լեզվով հավա-
քում ե խոտը, քաշում ե դեղի բերան, սեղմում



Նկ. 2 Կովի ծնոտը

Ե ՆԵՐՔԵՒԻ ՃՆՈԹԻ ՌԵԹ ԿՄՐԻՉՆԵՐԻ և ԿՄՐԻՉ ա-
ՄԱՄՆԵՐԻց զուրկ ՎԵՐԻՆ ՃՆՈԹԻ ԿՌՉՄ ՅԵՎՐԻ ՄԻջն
և զլուխը ԴԵՍԻ ՎԵՐ ՉԱՐԺԵԼՈՎ պոկում: ՊՈՂԱԾ
ԽՈՏՆ Առանց ծամելու կուլ եւ տալիս:

Դանդաղ առաջ գնալով կովը բավական
յերկար արածում եւ: Շնորհիվ ուժեղ և ամուր
վոտքերի նա կարողանում է իր ծանր մարմի-
նը հեշտությամբ ման ածել: Վոտքերը վերջա-
վորվում են չորս մատով: Վորոնցից յերկուսի
ծայրերը պատած են յեղջերանյութով, իսկ մյուս
յերկուսը բավական բարձր են և յեղջերանյու-
թով պատած չեն: Կովը յերկումբակավոր կեն-
դանի յեւ: Ամուր սմբակները կովին հնարավո-
րություն են տալիս բավական թեք աեղերով
բարձրանալու և յերկար ժամանակ արոտներում
զբոսնելու: Նրա պարանոցը բավական հաստ և
ուժեղ եւ: Այդ պատճառով ել կովը կարողանում
է ամբողջ ժամերով գլուխը կախ պահել:

Կովի զգայարաններից շատ զարգացած ե
նոտառությունը: Նրա դունչը միշտ ել խոնավ եւ:
Դրա շնորհիվ նա կարողանում է ճանաչել կերը
և վնասակար ու թունավոր բույսերը չի ու-
տում:

Կովը շատ թշնամիներ ունի: Նրա վրա բաշ-
մաթիվ ճանճեր և միջատներ են հարձակվում և
անհանգստացնում: Այդ վրքը բայց ճանճրացնող

Ելակների դեմ նա կովում ե իր պոչով, վոր
անընդհատ շարժում ե և սիջատներին քշում:

Խոշոր թշնամիներից նա պաշտպանվում է
իր յեղջրուրներով: Կովի յեղջրուրը սնամեջ մի
պատյան ե, վոր նստած ե ճակատուկրի ցցված-




Նկ. 3 Գանգ և յեղջրուր

բի վրա: Շնորհիվ ամուր յեղջրուրների, զանգի
հաստ վոսկրների և մկանոտ պարանոցի նա կա-
րող ե ուժեղ հարվածներ տալ և թշնամիներին
փախցնել:

5. ՄԱՐՍՈՂԱԿԱՆ ԽՈՂՈՎԱԿԸ

Ինչպես վերելում տեսանք, կովն արածած
խոտը չի ծամում, այլ ուղղակի կուլ ե տալիս
և բավական շատ ուտում: Այդքան շատ կերա-

կուր ընդունելու համար նրա ստամոքսն եւ³
պետք եւ մեծ լինի։ Յեվ այդպես ել եւ տավա-



Առջևոտութիւն կիսել է

ըի ստամոքսն այնքան մեծ եւ, վոր կարող ե
մոտ 267 լիտր կամ յեթե դուլերի վերածենք՝
մոտ 22 դույլ ջուր տանել։

կովի, ինչպես և այծի ու վոչխարի, ստո-
մոքսը կազմված է 4 մասից. Դրանք են՝ գան-
ձակ կամ թափան կծիկ կամ ցանցիկ, հաղարա-
թերթիկ և շիրդան կամ իսկական ստամոքս:

Անծամել կերակուրը կերակրափողով անց-
նելով մտնում է նախ գանձակը, վոր այդ 4
մասերից ամենիցմեծ նե: Այդտեղնա տաքանում,
փափկում և տրորփում ե: Բացի այդ՝ վորոշ
ժամանակ գանձակում մնալով կոպիտ կերը ըս-
կսում է խմորվել և ավելի դյուրամարս ե դառ-
նում: Այդոեղից կերակուրն անցնում է կծիկը,
սա մկանոտ փոքր պարկ ե, վորը կերակուրը
փոքր կծիկներով յետ դեպի բերանն է ուղար-
կում: Յեթե դիտեք հանգիստ վորոճացող կովին
կամ յեղին, դուք կարող եք նկատել, թե ինչպես
կերի կծիկը վեր ե բարձրանում դեպի բերանը:
Այստեղ կոշտ կերն ընկնում է սեղանատամնե-
րի արանքը:

Այնքան շատ և կոշտ կերը մանրացնելու հա-
մար, կովի բերանում կան յուրաքանչյուր ծնոտի
ամեն կող և՝ 6 հատ սեղանատամ, ընդամենը 24
հատ: Սեղանատամները մեծ են, լայն, տափակ և
կիսալուսնաձև ցցվածքներ ունեն, նրանք ա-
ղոթիքների նման շարժվելով՝ կերը մանրացնում
են: Ասում են՝ կովը վորոճում ե:

Մանրացը կերը յերկրորդ անգամ ստա-

մոքս իջնելով ել զանձակը չի մտնում, այլ անց հում և հազարաթեսթիկը. Մըա թերթերի արանքում կերը տրուվում է. Այստեղից նա անցնում ե շիրդոնը կամ իսկական ստամբուր. Մինչ այժմ կերը մանկանում էր, տրորվում և փափկում. Հորրորդ մասում արդեն նրա վրա մարսեցնող հյութեր են թափվում:

Շիրդոնից գուրս գալով՝ կերը մանում ե տասյերկու մատնյա աղիքը, այսաեղ ել կերի վրա լեղի և զանազան այլ մարսեցնող հյութեր են թափվում. Ապա գալիս ե աղիքը վորտեղ կերակուրի մարսած մասը ծծվում ե, իսկ չմարսած մասն անցնում ե հաստ աղիքը և մարմնից դուրս ե գալիս. Կովի աղիքում կարող ե տեղափորվել մոտ 110 լիտր ջուր՝ 70 լ բարակ աղիքում և 40-ը հաստ աղիքում:

Այս նկարագրից մեզ համար պարզվում ե, վոր կովի ստամբուր շատ լավ հարմարված ե մեծ ծավալ և քիչ մնունդ ունեցող կոպիտ կերերին:

6. ԿԱԹՆԱՐԱՏՈՒԹՅԱՆ ՆՇԱՆՆԵՐ

Ինչպես վերևում տեսանք, կովը պահում են նրա համար, վոր իրենց ունեցած կերերը կաթ գարճնեն. Ուրեմն վորքան կաթնառատ լինի կովին, այնքան տերը շատ կողավի և լնդիտ-

կառակը. Մական ըոլոր կովերն ել հավասար
կաթնառատ չեն. կան այնպիսի կովեր, վորոնք
չնայած կերին ու խնամքին այնքան քիչ կաթ
են տալիս, վոր պահելն իսկ չարժե:

Ինչպես ճանաչել կաթնառատ կովին:

Ամենից առաջ՝ վորպեսզի շատ կաթ տա,
կովը շատ ել պիտի ուտի ու մարսի: Յեվ իս-
կապես կաթնառատ կովի ախորժակը լավ ե. նա
շատ ե ուտում և կերածը լավ մարսում:

Բայց բավական չե լավ մարսել, նա մար-
սածը կարող ե վոչ թե կաթ, այլ ճարպ դարձ-
նել. Լավ կովը գիրանալու հատկություն չու-
նի: Նրա գլուխը փոքր և չոր ե, մարմինը վոչ
գեր և վոչ ել շատ վտիտ, կաշին նուրբ ե և
փայլուն:

Ինչպես գիտենք կաթն առաջանում ե ըս-
տինքներում: Կովն ունի չորս ստինք՝ չորս պը-
տուկով: Կաթնառատ կովի ստինքները մեծ են
և փափուկ: Կաթ ամբարելիս նրանք դեպի ցած
և լետ են ուռչում: Նրա պտուկները լերկար են՝
գլանածե և իրար հավասար:

Մարսված սնունդը աղիքներով ծծվում ե
արյան մեջ և նրա հետ շրջում ամբողջ մարմի-
նը. Արյան անոթները փորի տակ մսի միջով
դուրս են գալիս և կաշվի տակով դեպի ստինք-
ները գնում: Արյան անոթի անցման տեղը կոչ-

վում ե կաթնաղբյուր: Վորքան կաթնաղբյուրները
մեծ և նրանցից զուրս յեկող արյան անոթները
հաստ լինեն, այնքան կռվը շատ կաթ կտա: Ելի
մի շարք նշաններ կան, վորոնցով վորոշում են
կովի կաթնառատությունը:

Սակայն այս նշաններից բացի, պետք ե ի-
մանալ թե ինչպես են խնամել նրան ծնվելու
որից սկսած: Շատ անգամ ամենալավ կովերը
վատ խնամքի պատճառով բոլորովին փչանում
են: Այդ պատճառով ել յերբեք արտաքին նշան-
ներին չեն հավատում, այլ փորձնական կիթ են
կազմակերպում: Մի քանի որ կթում են և կա-
թը կշռում: Կովի կաթնառատությունն իմանա-
լու ամենահաստատ ձեր սա յե:

7. ԿԵՐԱԿՐՈՒՄ

Լավ կով ունենալը դեռ բավական չե.
պետք ե իմանալ նոև նրան կանոնավոր կերակ-
րելու և խնամելու ձեր: Այդ պատճառով այժմ
մեծ ուշք են դարձնում կովի ինչպես և այլ
գյուղատնտեսական կենդանիների կերի և խը-
նամքի վրա:

Ինչպես ե վարվում մեր գյուղացին:
Նա կովին իր պահեստի համեմատ ե կերակ-
րում: Յեթե շատ ունի, տալիս ե ինչքան վոր
կռվը կռւտի, իսկ յեթե բեշ ունի՝ այնքան ե

տալիս, վոր կովն իր գոյությունը հազիվ հազ
միայն կարողանում ե քաշ տալ: Թե առաջին և
թե յերկրորդ դեպքում նա սխալ ե զարվում:

Առաջին դեպքում կովը պետքից ավելի կու-
տի և կերածի չափ արդյունք չի տա: Դա ի
հորկե տիրոջ համար վնաս ե: Բացի այդ կովը
կարող ե գիրանալ և կաթը պակասեցնել, սա-
յէլ այլ վնաս:

Յերկրորդ դեպքում ել կովը սպասած ար-
դյունքը չի տա, կաթը կողակասեցնի և ինքն ու
հալից կընկնի: Իսկ այսպիսի դեպքում կով պա-
հելը վոչ մի սիտք չունի. Նա անտեսության հա-
մար վնաս ե:

Այդ ե պատճառը, վոր այժմ լավ տնտե-
սությունների մեջ կովին հաշվով են կերակրում.
այնքան են տալիս, վոր առողջ ապրի ու շտա-
կաթ տա: Դրանից տվել տալն ել, պակաս տա-
լըն ել անտեսության համար խռշոր վնաս ե:

Բայց այդ հաշիվներն անելու համար պետք
ե իմանալ, թե ինչ կերեր կան, վոր կերը յերբ
են տալիս, ամեն կերից ինչքան պետք ե տալ,
վորքան պետք ե տալ կենդանուն ապրելու հա-
մար և վորքան պետք ե տալ արդյունք ստանա-
նալու համար:

8. ԿԵՐԵՐ


Կովին և այլ գյուղատնտեսական կենդանիներին կերակրելու համար բազմատեսակ կերեր կան։ Այդ կերերը կարելի յե բաժանել հետևյալ խմբերի։

Չոր, կոպիտ կերեր, կանաչ կերեր, արմա-
տապտուղներ և պալարապտուղներ, խտացրած
կերեր, կենդանական կերեր:

Չոր կոպիտ կերերն են՝ առվույտի, յերեք-
նուկի, վիկի, սիզախոտի, մարզագետնի խոտե-
րը և գարու, ցորենի աշնան և գարնան դար-
մանները։ Սրանք մեծ ծավալ և քիչ սննդարար
նյութ ունեն։ Սակայն առանց այս կերերի, կո-
վը վոչ մի դեպքում ապրել չի կարող։ Յեթե կո-
վին ուժեղ կեր չտանք, նա կապրի և առողջ
կլինի, բայց յեթե կոպիտ կեր չտանք, նա ան-
պահման կհիվանդանա՝ նրա մարսողությունը
կխանգարվի։ Մոտավոր հաշվով գտել են, վոր
կովի քաշի ամեն 40 կիլոյին պետք է մեկ կիլո
չոր կոպիտ կեր տալ։

Սակայն չոր կոսկիտ կերով կովը կարող ե
միայն առողջ ապրել, բայց նրա կաթնառառ-
թունը շատ թույլ կլինի:

Վորքան խոտի մեջ լեռեղնուկ և այլ թի-



թեռնածաղիկ բուլսեր շատ կան, այնքան նա
յավ և սննդարար ե:

Յեթե խոտը ծաղկած ժամանակ ե քաղած,
նա սննդառատ և դյուրամարս ե, բայց յեթե
ուշացրած ե, նրա սնունդը սերմի հետ գնում ե
և ինքն ել փայտանում և դժվար ե մարսվում:

Կանաչ կերերը լավ են ազդում կովի կաթ-
նատվության վրա և դյուրամարս են: Սակայն
պետք ե կերցնել միայն մինչև ծաղկելը: Դրա-
նից հետո կանաչ խոտը փայտանում և դժվա-
րամարս ե դառնում: Առհասարակ զգուշանում
են ցողոտ կանաչ արոտավայրում արածացնե-
լոց: Նա փորն ուոցնում և կենդանուն պայթեց-
նում է: Այդ պատճառով նախքան արոտ քշելը
քիչ չոր խոտ են տալիս, մինչև վոր արոտի ցո-
ղը գոլորշիանա: Իբր կանաչ կեր, բացի խոտից
տալիս են և դազարի, ճակնդեղի, կաղամբի
տերևներ:

Արմատապտողները յեվ պալարապտողները
նույնպես կաթը շատացնում են: Կովին տալիս
են որական 12 կիլոյից վոչ ավել կարտոֆիլ,
20 կիլոյից ել վոչ ավել դազար և բազուկ:
Շաղգամ տալիս են մինչև 40 կիլո:

Խտացրած կերերն են քուսպերը, ալյուր-
ները, ցորենի թեփը: Ամենալավ քուսպերն են
արևածաղկինը և կտավիատինը: տալիս են մին-

չկ 1¹/₂—3 կիլո բամբակի քուսպը կովի վրա
վատ ե ազգում. 1—1¹/₂ կիլոյից ավել չեն
տալիս:

Ալյուրները լավ կերեր են. նրանցից տալիս
են մինչև 3—5 կիլո որական:

Յորենի թեփը շատ լավ կեր ե կովի հա-
մար, բայց 4 կիլոյից ավել չեն տալիս՝ փորլուծ
ե առաջացնում:

Կենդանական կերերն են յերես քաշած կաթ
շիճուկ, թան. Այս կերերն ոգտակար են ջահել
տավարի համար. Յերբեմն կովերին ել են տա-
լիս. այս կերերը յավ են ազգում ստամոքսի
վրա:

9. ԿԵՐԻ ՄԻԱՎՈՐ

Կիտնականները բազմաթիվ փորձերով գր-
անել են, վոր յուրաքանչյուր կեր վորոշ քանա-
կությամբ սնունդ ունի: Պայմանական կերպով
ընդունել են 410 գրամ վարսակի ալյուրն իբր
մեկ միավոր: Հետո մնացած կերերը վարսակի
ալյուրի հետ համեմատելով զտել են, վոր մեկ
միավոր կազմելու համար պետք ե վերցնել.

410 գրամ վարսակի ալյուր

548 » ցորենի թեփ

410 » կտավատի քուսպ

307,5 » բամբակի քուսպ

307,5	»	տըևածաղկի քուսպ
307,5	»	քունջութի քուսպ
615	»	կանեփի քուսպ
820	»	չոր առվույտ
1025	»	լավ խոտ
1230—1640	»	ճահճի խոտ
1640	»	գարնան դարման
2460	»	աշնան դարման
2870	»	կանաչ խոտ
1440	»	միջակ կարտոֆիլ
2050	»	ջրալի »
4100	»	կերի ճակնդեղ
4100	»	ճակնդեղի տերևներ:

10. ԿԵՆՍԱՊԱՀ ԿԵՐ

Յուրաքանչյուր տպրող կենդանի շնչում ե,
շարժվում ե, կերը մարսում ե, նրա սիրտն ու
ներքին այլ գործարաններն անընդհատ գործում
են: Այս բոլորի համար առեն որ մարմնի վորոշ
մասը ծախսվում է: Վորպեսզի մեր կովը չնի-
հարի, այլ վորոշ քաշի մնա, նրան պետք ե ա-
ռեն որ համապատասխան կեր տալ: Ահա, այն
կերը, վոր տրվում ե կենդանուն միայն առողջ
տպրելու համար կոչվում ե կենապահ՝ կեր:
Փորձերով գտնված ե, վոր կովի ամեն 49 կի-
լո կենդանի քաշին պահանջվում ե մեկ միավոր

Հիւնաստանի կեր: Յեթե կովը դեռ չահել է և ա-
ճում է, մեկ միավոր եւ դրա համար են ավե-
լացնում կենսուպահ կերի վրա: Իսկ յեթե կովը
հղի լե, հարթի զարգացման համար ավելացնում
են դարձյալ մեկ-յերկու միավոր:

Դիցուք մեր կովը կշռում է 392 կիլո, դեռ
աճում է և հղի լե: Նրան ոլեաք ե որական
տակ:

Քաշը չպակասելու համար 8 միավոր

աճման	»	1	»
-------	---	---	---


հղիության	»	1	»
-----------	---	---	---

Ընդամենը 10 միավոր

11. ԿԵՆԴԱՆԻ ԲԱՇ

Կենսապահ կերը վորոշելու համար անհրա-
ժեշտ է խմանալ, թե վորքան է կշռում կենդա-
նին, կենդանի քաշն խմանալու համար կենդա-
նուն կանգնեցնում են մեծ կշեռքի վրա և կը-
ռում: Իսկ յեթե կշեռք չկա, կարելի լի մոտա-
վորապես խմանալ հետեւյալ ձևով: Նախ կենդա-
նուն մի հարթ տեղ են կանգնեցնում: Ապա
վերշոկներով չափում են մեջքի յերկարությունը
պոչի հիմքից մինչև մնագավի ամենաբարձր կետը
(առջենի վոտքերի ուղիղ զծով): Հետո դարձյալ
վերշոկներով չափում են փաթը թիակի յետին

գծով։ Յերկու թվերը բազմապատկում են և
ձուավորապես խմանում են կովի կենդանի քա-



Նկ. 5 Կենդանի քաշ

Առ ֆունտերով։ Կիլոգրամների վերածելու համար ստացած թիվը բաժանում են յերկուս և
կեսի։ Դիցուք մեջքի յերկարությունը 25 վեր-
շոկ է, իսկ փաթը՝ 40. ուրեմն կովի կենդանի
քաշը կլինի $25 \times 40 = 1000$ ֆունտ կամ 410 կի-
լոգրամ։

Յեթե ձեռքի տակ սանտիմետրանոց ժա-
պավեն կա կարելի յե յերկարությունը և փաթը
չափել սանտիմետրներով։ Ստացած թիվը բազ-
մապատկել և արտադրյալը բաժանել 48-ի,
կստանանք կովի քաշը կիլոգրամներով։

Դիցուք մեջքի յերկարությունն ե 111 սանտիմետր (25 վերշոկ), իսկ փաթը՝ 178 սանտիմետր (40 վերշոկ):

$$178 \times 111 = 19758$$

$$19758 : 48 = 411$$

Մոտավորապես նույնն է ստացվում: Չպետք ե մոռանալ, վոր յերկու դեպքում ել միայն մոտավոր թվեր ենք ստանում:

12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐ ԿԵՐ

Յեթե կովը կաթ ե տալիս, ուրեմն նա մարմնի վորոշ մասը պակասեցնում է: Յեթե այդ պակասածը լրացնելու համար կովին կեր չտանք, նա կսկսի նիհարել, կաթը կպակասեցնի և կարող ե բոլորովին ցամաքել:

Վորպեսզի կովը չնիհարի և կաթը չպակասեցնի, բացի կենսապահ կերից տալիս են նաև արդյունաբեր կեր: Արդյունաբեր կերի բանակը վորոշում են ստացած կաթի քանակով: Այս մասին ել գիտնականները բազմաթիվ փորձեր են արել և գտել են, վոր ամեն $1\frac{1}{4}$ կիլո տված կաթի փոխարեն պետք ե կովին տալ մեկ միավոր կեր: Այսպես՝ յեթե կովը տալիս ե որական հինգ կիլո կաթ, նրան պետք ե տալ չորս միավոր կեր:

Բացի այս՝ ի նկատի ունենալով, վոր կովը

կարող ե կաթն ավելացնել, բացի այդ չափից տալիս են դարձուալ կես կամ մեկ միավոր հավելյալ կեր:

Յեթե կովը կաթն ավելացնում է, կերն ել ավելացնում են, իսկ յեթե պակասեցնում ե՝ կերն ել համապատասխանորեն ոլակասեցնում են:

13. ԻՆՉՊԵՍ ԵՆ ԿԵՐԱԲԱԺԻՆ ԿԱԶՄՈՒՄ

Կովին տված մի որվա կենսապահ և արդունաբեր կերերը միասին կազմում են կերաբաժին (կամ բացին):

Կերաբաժին կազմելու համար նախ առեն տաս որը կենդանուն կշռում են կամ չափուաներով մոտավորապես կենդանի քաշը վորոշութ: Ապա, յեթե նու կաթ ե տալիս, կշռում են ամբողջ որվա կիթը: Հետո սկսում են հաշվել: Դիցուք մեր կովը 490 կիլո յե կշռում, հղի յե և որական տալիս ե 7 և կես կիլո կաթ:

Առողջ մնալու և 490 կիլո քաշը չպակասեցնելու համար տալիս են	10 միավոր
7 և կես կիլո կաթի համար	6 »
հղիության համար	1 »

Բնդամենը՝ 17 միավոր

Քանի վոր մեր կովը 490 կիլո յե կշռում,

նրան պետք է անպայման տանը տուեն 40 կիլո
կշռին մեկ կիլո չոր կոպիտ կեր՝ հաշված ընդա-
մենը մոտ 9—12 կիլո խոտ կամ գարման։
Կաթնառու կովին շատ գարման տալր լավ չե,
ուրեմն պետք է տանը մոտ 7—8 կիլո խոտ և
1—2 կիլո գարման։ Իսկ մնացածը պետք է
լրացնենք ուժեղ կերերով։

Այսպիսի պատկեր կստացվի՝

7,3	կիլո չոր խոտ	մոտ 7	միավոր
1640	գրամ գարնան գարման	1	»
750	» բամբակի քուսպ	2,5	»
2740	» ցորենի թեփ (ալյուրի) 5		»
6150	» կերի ճակնդեղ	1,5	»

Ընդամենը՝ 17 միավոր

14. ԿՈՎԻՆ ԿԵՐԱԿՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Կովին կերակրում են որը յերկու կամ յե-
րեք անգամ։ Յերկու անգամ կերակրելը զերա-
դասելի յե, վորովնետե այս դեպքում նրան բիշ
են անհանգստացնում։

Կերաբաժինը յերկու մաս են անում և տա-
լիս են կեսն առավոտը ժամը 5—7-ին և կեսը
յերեկոյան ժամը 5—8 ին։ Ի հարկ է բոլոր տե-
սակի կերերն ել կիսում են։

Սկզբում տալիս են ուժեղ կերերը։ Զար-

դած քուսպը, ալյուրը կամ թեփը խառնում են յերկու իրենց չափ թրջած դարմանի հետ և այնպես տալիս:

Ապա տալիս են արմատա և պալարապտուղները և միայն ամենից վերջը տալիս են կոպիտ կերերը:

Ինչ վերաբերում ե ջրին, կովի մոռ միշտ պետք ե մաքուր և վոչ ցուրտ ջուր լինի. Թույլ են տալիս խմել այնքան. վորքան ցանկանում ե:

Հազ տնտեսությունների մեջ կերը միշտ վորոշ ժամին են տալին. Յեթե ուշացնում են կովն անհանգստանում և կաթը պակասեցնում ե: Իսկ յեթե վորոշված ժամկետից շատ շուտ են տալիս, կենդանին դեռ ուտելու ախորժակ չի ունենում, կարգին չի ուտում և տված կերը «խառնում ե»:

Բացի այդ՝ առհասարակ վոչ մի դեպքում կովին չեն անհանգստացնում. Հարվածել, քաշել, կոպիտ վարվել, գոռալ, հայրոյել չի կարելի. Փորձը ցույց ե տվել, վոր անհանգստանալու դեպքում կովը կաթը պակասեցնում ե:

Յեթե կովին արոտ են ուղարկում, ապա նայած թե ինչպիսի վորակի յէ այն, ըստ գրայել հաշվում են: Առհասարակ միայն արտառվ չեն բավականանում և մի փոքր ել լրացուցիչ կեր են տալիս:

Պետք ե շեշտել, վոր յեթե ուզում են կերի քանակը փոխել կամ կերաբաժնի մեջ վորեե կեր մի ուրիշով փոխարինել, անպայման դաստիճանաբար և գանդաղորեն են կատարում։ Նույնպես և գարնանն արոտ դուրս բերելիս միանգամից զոմից չեն կարում։ Մկզբում որական մեկ-յերկու ժամով են արոտ տանում։ Ապա այդ ժամանակամիջոցն աստիճանաբար մեծացնում են։

Հանկարծակի փոփոխություններն ուժեղ կերպով ազդում են կովի վրա։ Դրանց պատճառով նա կաթը պակասեցնում է և նույնիսկ կարող ե հիվանդանալ։

Կերը տալիս են կթելուց հետո։

15. ♀ Ո Մ

Ինչպիսի լավ կով ել վոր ընտրեն և ինչպես ել կերակրեն, այնուամենալիվ արդյունք չեն ստանա և նույնիսկ վնաս կանեն յեթե նըրան լավ չխնամեն։

Խնամելու ելությունը կայանում ե նըրանում, վոր ողի, ջերմության, լուսի, մաքրության տեսակետից կենդանուն ամենալավ պայմանների մեջ են դնում։

Այս տեսակետից գոմը մեծ նշանակություն ունի։ Այնտեղ ե անցկացնում կենդանին ցուրտ

յեղանակը՝ տարվա մեջ մի քանի ամիս, աճնտեղ
է պատսպարվում ցրտից և վատ յեղանակներից՝
քամուց, անձրեից, ձյունից:

Մեր գյուղացին գոմի վրա առանձին ուշտ-
դրություն չի դարձնում: Այնքան, վոր մի շենք
լինի, ուր կարելի յե կովին ներս տանել և կա-
պել: Նրա գոմը նեղ է, մութ, կեղտոտ, առանց
ողտփոխման և խոնավ: Այսպիսի գոմում ա-
մենալավ կոզն իսկ կաթ չի տա, միայն մեր
տավարն է, վոր յերկար դարեր նման պարման-
ներում ապրելով հարմարվել է և մի կերպ իր
կյանքը քաշ է տալիս:

Ի՞նչ են պահանջում գոմից: Լավ գոմը պի-
տի լինի տաք. Նրա մեջ ձմեռը ջերմությունը
պետք է լինի մոտ $12-15^{\circ}$ ըստ Ցելսիուսի:
Գոմի ողը պետք է խոնավ և կեղտոտ չլինի.
Դրա համար հատուկ ողանցքներ կամ պատուհան-
ներ կան, վորոնցով գոմը հաճախ ողափոխու-
թյան և յենթարկվում: Նա պետք է բավարար
լուսավորված լինի: Գոմի ներսում պիտի կատար-
յալ մաքրություն տիրի: Յուրաքանչյուր կեն-
դանի աճնտեղ պետք է իրեն համար բավարար
չափով տեղ ունենա: Տեսնենք, թե ինչպես են
գոմը կառուցում, վոր այդ պահանջներին բա-
ժարարի:

16. ԳՈՄԻ ԴԻՐՔՆ ՈՒ ՄԵՇՈՒԹՅՈՒՆԸ

Վերոհիշյալ պահանջներին բավարարելու համար գոմը կառւցում են չոր գետնի վրա. հարժար ե մի փոքր թեր տեղ, վորտեղ ջուրը չի կանգնում, այլ անմիջապես հոսում ե: Բացի այդ՝ աշխատում են, վոր դուռը և պատուհանները դեպի լույս և արև լինեն դարձած. այդ պատճառով եւ շենքի ձակատը դարձնում են դեպի արեելք:

Գոմի մեծությունը պետք ե համապատասխանի կենդանիների մեծության և թվին: Յուրաքանչյուր միջակ կովին տալիս են 2 և կես մետր յերկարությամբ և 1 ու կես մետր լայնությամբ տեղ, խոշոր կովին՝ 3 մետր յերկարությամբ և 1 մետր 80 սանտիմետր լայնությամբ: Միջանցք թողնում են $1\frac{1}{2}—2\frac{1}{2}$ մետր: Բարձրությունը հարմարեցնում են կենդանիների մեծության և թվին. կենդանի քաշի յուրաքանչյուր 500 կիլոյին տալիս են մոտ 36—52 խորանարդ մետր ծավալով: Միջին հաշվով բարձրությունն անում են $2\frac{1}{2}—4$ մետր:

17. ՊԱՏԵՐՆ ՈՒ ԱՌԱՍՏԱՂԵ

Ինչ նյութից եւ լինեն շինված պատերը՝ նրանք պետք ե անցքեր չունենան, վոր քամի

շփչի և չերմությունը դուրս չգնա: Բացի այդ՝
նրանց միջով խոնավությունը և վատ ողը
պետք է կարողանա ծծվել և դուրս գնալ: Հույ-
սի և մաքրության տեսակետից զոտի ներսից
պատերը սվազում են և կրով սպիտակացնում:
Յուրա գոմը տնտեսության համար վնասա-
կար է:

Յուրա գոմում կովն ավելի շատ եռտում,
բայց քիչ կաթ ետալիս: Ավելորդ կերը նա-
ծախսում է իր մարմինը տաքացնելու վրա, վո-
րովինետև ցուրտ գոմում վերջինս շուտ ել սառ-
չում է:

Առաստաղը նույնպես անցքեր չպիտի ու-
նենա, վորպեսզի տաք ողը չհեռանա և զոտի
վատ գաղերը տանիքի տակ չհավաքվեն: Մա-
նավանդ դա կարիոր է, յեթե կերերը գոմի տա-
նիքի տակ են պահում:

Տանիքը շինում են թիթեղից, ծղնոտից կոմ
կղմինդրից: Ամենից լավը վերջինս է: Թեև թի-
թեղն ամուր է և կը ակից չի վախում, բայց նա
արևից շիկանում է և զոտն անտանելի շոգ դարձ-
նում: Ծղնոտն այդ տեսակետից լավ է, բայց
հեշտ և հրդեհվում:

18. ԴՐԱԿԱՆ ՅԵՎ ՊԱՏՈՒՀԱՆԵՐԸ

Դռները և պատուհաններն այնպես են շինում, վոր լինեն բավական մեծ և ամուր ու սեղմ փակվեն:

Յեթե տեղը շատ ցուրտ է, մի փոքր նախասենյակ են շինում, վոր ցուրտն անմիջապես գոմի ներսը չթափանցի:

Պատուհաններն ամրացնում են մուրներից բարձր այնպես, վոր լույսը կենդանիների մեջքին ընկնի. յեթե պատուհանները ցածր լինեն, լույսը կենդանիների աշքերը կրնկնի և նրանց կանհանգստացնի:


Բացի այդ՝ պատուհանների լայնքը բարձրությունից ավել են անում, վորպեսզի լույսը հատակի վրա համաչափ տարածվի:

Լույսի նշանակությունը շատ մեծ է. Նախ լույսը վոչնչացնում է հիվանդություններ առաջնող մանրեներին՝ մանր, առանց խոշորացույցի անտեսանելի՝ բույսերին. Մթության մեջ սրանք զարգանում և զանազան հիվանդություններ են առաջացնում. Յերկրորդ՝ մթության մեջ տափարն իրեն շատ վատ է զգում, ախորժակը կորցնում է և թուլանում. մինչդեռ լույսը նրան աշխատացնում է, ախորժակը բացում

և դրանով մարսողության նպաստում։ Վերջապես՝
աթության մեջ մաքրությանը հետիելը և գոմում
աշխատելը դժվար է։

Սական շատ

ուժեղ լույսն
ել իթ վատ կող-
մերն ունի թեև
ուժեղ լույսը
մանրեներին
լավ ե կոտո-
րում, բայց նա
կենդանիներին
անհանգստաց-



Նկ. 6 Դեղի վեր բացվող պատռչան

նում ե, վորի

պատճառով ել սրանք իրենց շատ վասառ են
զգում։ Ամենականոնավոր լուսավորությունն այն
դեպքում է լինում, յերբ պատռհաններին մա-
կարդակը գոմի հատակի մակարդակի $\frac{1}{12} - \frac{1}{15}$
մասն է կազմում։ Յեթե որինակ գոմին հա-
տակի մակարդակը 60 քառակուսի մետր է,
ապա բոլոր պատռհանների մակարդակների
գումարը պիտի լինի 4—5 քառակուսի մետր։
Այսպիսի լուսավորությունը լավ է ազդում կովի
վրա և չի ջղանացնում։

19. ՈԴԱՓՈԽՈՒՄ

Ողբ կազմված ե մի քանի գաղերից։ Մաքուր ողի մեջ ամեն 100 չափից մոտ 78-ը ազոտ է, 21-ը՝ թթվածին և մնացածը՝ այլ գաղեր։

Ազոտը կենդանիների համար վոչ լավ և վոչ ել վատ է։ Նա միայն թուլացնում է մյուս դաշերի ազդեցությունը։ Յեթե կենդանիները միայն մաքուր թթվածին շնչելին, լերկար չելին կարող ապրել։ շնորհիվ ազոտի նրանք այդ վտանգից ազատ ենք։

Թթվածինը կենդանիների և բույսերի համար շատ անհրաժեշտ է։ Առանց թթվածնի վոչ կենդանիները և վոչ ել բույսերն ապրել չեն կարող։

Մնացած գաղերից մեզ համար ամենակարեվորն ածխաթթվական գազն է։ Նա շատ քիչ քանակությամբ ե գտնվում մաքուր ողի մեջ։ 10000 չափ ողից միայն 3 չափն ե ածխաթթվական գազ։ Սակայն կենդանիներով լի փակ շենք երում նրա քանակը սկսում ե մեծանալ։ Կենդանիները ներշնչում են թթվածնով հարուստ մաքուր ող և արտաշնչում են թթվածնով աղջատ և ածխաթթվական գազով հարուստ կեղտու ոդ։ Աստիճանաբար գոմի մեջ ածխաթթվական գազի քանակը մեծանում է։

Բացի ալդ վսասակար գազից ու գոլորշոց՝ կեն-
դանիներից և նրանց աղբից ու մեղից այլ թու-
նավոր գազեր ել են խառնվում ողին։ Ողը գառ-
նում ե խոնավ, թունավոր գազերով հագեցած
և խեղդող։ Տավարը դժվար ե շնչում, լավ չէ
ուտում, նրա արյունը լավ չի մաքրվում և ըս-
կում ե աստիճանաբար թունավորվել։ Պարզ ե,
վոր ալդպիսի պայմաններում ապրող կովը շատ
արդյունք տալ չի կարող։


Բայց յերբ ոդանցքեր են կառուցում և ողը
մաքուր պահում, ամեն ինչ փոխվում ե։ Տա-
վարն ազատ շնչում, ախորժակով ուտում, ա-
ռուցանում ե և կիթը բարձրացնում։

Ինչպես մաքուր պահել գոմի ողը, Ամառն
ալդ հարցը հեշտ ե լուծվում։

Պարզապես կարելի յե գոներն ու պատու-
հաները յերեմն բաց անել կամ բոլորովին բաց
թողնել։ Սակայն ձմեռն ալդպես վարվել չեն կա-
րող։ Այդ դեպքում ոգտվում են հատուկ պատու-
հաններով, վորոնք սովորական պատուհանի նման
կողքի չեն բացվում, այլ դեպի ցած։ Սառ ողի
հոսանքն անմիջապես կենդանիների վրա չի
փչում։ Նա փշում ե դեպի առաստաղ և ալդ-
տեղից խառնվում գոմի ողի հետ։

Լավ գոմերում հատուկ ողափոխման խո-
ղովակներ են կառուցում և դրանց միջոցով

Ժաքը ըստ ողբեկաց Ողափոխման խողովակը տախտակներից շինված քառանկյունի խողովակ է,



Նկ. 7. Ողափոխման խողովակը

Վորը ներսից խաչաձև ամրացած տախտակներով չորս նեղ խողովակի լեռ բաժանվում։ Թե վերեկից և թե ցածից նա փակ է։ Բայց և՛ վերին, և՛ ստորին ծալը երի մոտ կան չորսական անցքեր։ Ցածի անցքերն ունեն նաև դռնակներ, վոր

ըստ ցանկության կարելի չե բացել կամ փակել։
 Ողափոխման խողովակն
 ամրացնում են առաստաղի
 մեջ սյնպես, վոր ցածի ծայրը
 մի փոքր առաստաղից իջնում
 ե, իսկ վերին ծայրը բաց ոդ
 ե դուրս գալիս։ Յերբ ցածից
 դոնակները բացում են, ան-
 նկ. 8. Ողափոխման խո-
 ղովակի հատածը
 գամատենաթույլ քամու շնոր-
 հիվ մի խողովակով մաքուր ոդը ներս ե մտնում,
 իսկ հակաղիր խողովակով գոմի խոնավ, տաք և
 կեղտուր ոդը հեռանում ե։

Մաքուր և սառ ոդի մտնող հոսանքը դեպի
 ցած չի փչում, այլ կողքի գնալով համաչափ
 խառնվում ե գոմի ոդի հետ։

Ողափոխման խողովակն ամրացնում են դո-
 մի մեջտեղը։

20. ԳՈՄԻ ՀԱՏԱԿԸ

Գոմի հատակը պետք է մի քանի պահանջի
 բավարարի։ Նա պետք լինի տաք, փափուկ, հե-
 ղուկի համար անթափանց, առանց փոսերի, և
 ամուր։ Վոչ մի նյութ այս բոլոր պահանջներին
 չի բավարարում։ Փայտը տաք և փափուկ է,
 բայց մեզը լավ ծծում և շուտ ել փտում է։



Մեզի հետ նրա մեջ մտնում և այնտեղ բռն
են գնում հիվանդությունների մանրեները։ Այդ
տեղից նրանք վարակում են կենդանիներին։

Ցեմենտը թեև սառ ու կարծր է, բայց
նա հեղուկներ չի ծծում։ Ամենից վատ հատակը
հողն է ու քարը։


Լավ գոմերում հատակը ցեմենտից են շի-
նում։ Կովերի կանգնած տեղը մի փոքր դեպի
յետ թեք են շինում, վոր մեզը կենդանու տակը
չլճանա, հոսի և թափվի դուրս տանող խողովակը։
Շատ թեք անել չի կարելի, կովերն իրենց վատ
կզգան և կարող են հորթատել։ Հատակը մի փոքր
խորդ ու բորդ պետք է լինի, վոր կենդանիները
չսալթաքեն և չընկնեն։

Հատակի բացասական կողմերը լրացնելու
համար կովի տակը ցամքար կամ խշտիք են
ածում։ Ցամքարը կովի համար հատակը դարձ-
նում է ցամաք, մաքուր, փափուկ և տաք։ Ցամ-
քարը ծծում է մեզը և չի թողնում, վոր նա
փչացնի գոմի ողը։ Իբրև ցամքար են գործ ա-
ծում ծղնոտ, թեփ, տորֆ, մեղ մոտ նաև չորաց-
րած գոմաղը։

Ցամքարը հաճախ փոխում են։ Կենդանու-
յետեի մասի տակ նա ավելի շատ է կեղտոտ-
վում, այդ պատճառով ել յետեից հեռացնում
են այդ մասը, առջևինը յետ տանում և առջևը՝
նորն ածում։

21. ՄՍՈՒՐ

Կովը կերակուրն ընդունում է մսուրից և
կերամանից։ Այդ պատճառով նրանք ամուր, հարթ
և հեշտ մաքրվող պետք են լինեն։ Ամենավառը
դա փայտե կերամանն է. նա դժվար է մաքրվում.
և շուտ են փչանում։ Լավ գոմերում մսուրները
և կերամանները ցեմենտից են շինում։ Նրա




Նկ. 9. Կովը մսուրի առաջը

կողքին ամրացած են ջրամանը։

Մսուրը պետք է 30 – 35 սանտիմետրից

բարձր չլինի գեանից։ Կովերը բնականից սովոր են գլուխը կախ ուտել, այդ պատճառով ել բարձր մսուրը նրանց հոգնեցնում եւ,



Նկ. 10. Ինչպես են կապում կովին մսուրի առաջ

Վորպեսզի կովը մսուրի վրա չբարձրանա, նրա առաջ փայտե շրջանակ կա, մեջը յերկու թեք փայտ, այնպես, վոր կովը միայն գլուխը կարող ե անցկացնել և դեպի մսուրը յերկարացնել։

Հենց այդ շրջանակից ել կապում են կովին։ Մսուրը կարող ե պատին կպած լինել։ Սակայն կերը հեշտությամբ բաժանելու և մսուրը մաքրելու տեսակետից յերբեմն նրա և պատի արանքում միջանցք են թողնում։

22. ԽՆԱՄՔԸ

Խնամքի ամենաառաջին պայմանը լավ գոմն է, վորի մասին արդեն պատմեցինք։ Բացի այդ կովին առողջ պահելու համար խնամքի հատուկ կանոններ կան։

23. ԶՈՒՐԸ

Յերբեք կովին սառ ջուր չեն տալիս. նա կարող է կենդանուն մըսեցնել։ Բացի այդ՝ ստամոքսում տաքանալու համար սառ ջուրը չերմության կխլի. իսկ մենք գիտենք, վոր Չերմությունը սնունդից է առաջ գալիս, ուրեմն իզուր ավել կեր կծախսվի։ Կովին տալիս են զոմի շերմության ջուր։ Գոմում հատուկ ավաղան են շինում, ուր ջուրը նախքան կենդանուն տալը տաքանում է։

24. ՇԱՐԺՈՒՄ

Խնամքի մի այլ պահանջը արոտն է. կովին, գոնե ժամանակավորապես, պետք է արոտ տաներ, վոր ազատ ողում շարժվելու հնարավորություն ունենա։ Նույնիսկ ձմեռը լավ յեղանակներին կովին դուրս են հանում բակը՝ ազատ շարժումներ կատարելու։

25. ՀՈՂ

Բայց արոտ տանելիս զգուշանում են խոնավ հողից։ Խոնավ և ճահճոտ հողերի մեջ զանազան հիվանդությունների մանրեներ են տպրում, վորոնք վարակում են կովին և հիվանդացնում։ Խոնավ հողը սառ եւ և յերբեմն մրսեցնում ե կովին։

Վերջապես հողը կովի վրա ազդում եւ և կերի միջոցով։ Յեթե հողում վորես աղից քիչ կա, կերի մեջ եւ քիչ ել լինում և դրանից կովը հիվանդանում ե։ Որինակ կը պակասությունից վոսկրները վատ են զարգանում, ծռվում են և հեշտ կոտրվող են դառնում։ Դրա առաջն առնելու համար կերին կավիճ, ջարդված վոսկը և այլ հողեր են ավելացնում։

26. ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ

Խնամքի ամենակարևոր պայմաններից մեկը մաքրությունն ե։ Հավ տնտեսությունների մեջ կատարյալ մաքրության են ձգտում։ Հաճախ մաքրում են բոլոր կենդանիներին, լողացնում են, լվանում են կուրծը, մաքրում են սմբակները։

Մաշկը կարեւը գործարաններից մեկն ե։ Նա պաշտպանում է կենդանու մարմինն արտա-

քին ազդեցություններից՝ տաքից, ցրտից, անձ-
րեից, փոշուց։ Մաշկը վատ գործելու դեպքում
կենդանին լուրջ կերպով հիվանդանում է։

Յերբ կենդանուն յերկար ժամանակ չեն
լողացնում, նրա մաշկի վրա հավաքվում են քըր-
տինքի աղեր, ճարպ, թեփ, դրսից նստ սծ փո-
շին, խոնավություն։ Այդ բոլորը ցեխի նման մի
բան են դառնում, դրա մեջ բուն են դնում ման-
րեները և սկսում են փոտեցնել։ Այդ ժամանակ
կենդանին իրեն վատ ե զգում, շարունակ սյու-
ներին և պատերին ե քսվում, քորում ե, վրայի
կեղալը լիզում։ Կեղառա կաշվի վրա բուն են
դնում նաև մի շարք միջատներ, վորոնք ծծում
են կենդանու արյունը և մեծ անհանգստություն
պատճառում նրան։

Փորձերը ցույց են տվել, վոր կեղառա պահ-
վող կովը քիչ կաթ ե տալիս։

Կենդանուն մաքուր պահելու համար՝ տաք
յեղանակին լողացնում և լվանում են, իսկ ցուրտ
յեղանակին՝ մաքրում։ Յեթե ստիպված են լի-
նում ձմեռը կենդանու վորեկ մասը լվանալ, ան-
պայման զոլ ջուր են գործածում և լվալուց հե-
տո լավ ցածաքեցնում են ու միջանցիկ քամուց
հեռու պահում։

Մաքուր են պահում նաև կենդանու տակը.
Կեղան անմիջապես հեռացնում են։

Մաքրում են և մսուրներն ու կերամանները:
Շատ կարևոր ե մանավանդ կաթնատու կո-
լի կուրծի ժաքուր պահելու Կեղտոտ պահելու
դեպքում ստիճաները հիվանդանում են: Դրա
հետեանքով կ թը ցամաքում ե, աված կաթն ել
փշանում ու վարակվում ե և կարող ե հորթե-
րին ու մարդկանց վորակել:

27. ԱԽՏԱՀԱՆՈՒՄ

Առահանումը գոմը մաքրելու հիմնական ձևն
է: Ախտահանման ժամանակ վոչնչացվում են հի-
վանդությունների մանրեները. այդ պատճա-
ռով ել նա մեծ նշանակություն ունի: Վորքան
ախտահանումը հաճախ կատարվի, այնքան լավ:

Իբրև ախտահանիչ միջոց՝ զանազան դեղեր
են գործածում: Ամենից սովորական նոր հանգ-
ցրած կիրն է: Կիրը հանգցնում են, խառնում են
ջրի հետ և դրանով սպիտակացնում պատերն ու
առաստաղը:

Այն, ինչ վոր կրով սպիտակացնել չի կարելի,
այլ դեղերով են լվանում:

Շատ հիմնավոր կերպով ախտահանում են
մանավանդ հիվանդության դեպքում:

Առհասարակ մաքուր պահելու և լավ խնա-


մելու միջոցով կենդանուն ազատում են շատ
հիվանդություններից, վորոնք պակասեցնում են
արդյունքը, անպետքացնում կովկն և նույնիսկ
սպանում նրան:


ՑԱՆԿ

b)

1.	<i>Մեր ընտանի կենդանիները</i>	3
2.	<i>Կով</i>	5
3.	<i>Կաթնասու կովի նշանակությունը</i>	6
4.	<i>Կովի արտաքինը և կենցաղը</i>	8
5.	<i>Մարսողական խողովակը</i>	10
6.	<i>Կաթնառատության նշաններ</i>	13
7.	<i>Կերակրում</i>	15
8.	<i>Կերեր</i>	17
9.	<i>Կերի միավոր</i>	19
10.	<i>Կենսապահ կեր</i>	20
11.	<i>Կենդանի քաշ</i>	21
12.	<i>Արդյունաբեր կեր</i>	23
13.	<i>Ինչպես են կերաբաժին կազմում</i>	24
14.	<i>Կովին կերակրելու կարգը</i>	25
15.	<i>Գոմ</i>	27
16.	<i>Գոմի դիրքն ու մեծությունը</i>	29
17.	<i>Գոտերն ու առաստաղը</i>	29
18.	<i>Դանելը և պատուհանները</i>	31

19.	Ողափոխում	33
20.	Գույի հատակը	36
21.	Մոռլը	38
22.	Խնամքը	40
23.	Զուրը	40
24.	Շարժում	40
25.	Հող	41
26.	Մաքրություն	41
27.	Ախտահանում	43





ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038853

[094]

ՀՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ԳՐԱԴԱՐԱՆ

A 1
3889

1.	Տեղեվաթափ և աշնան գույներ	10	»
3.	Թռչունների չուն	10	»
4.	Պտուղներ և սերմեր	10	»
5.	Հող և նրա մշակումը	10	»
11.	Բամբակ	10	»
12.	Տորֆ, քարածուխ և նավթ	10	»
16.	Մեղու	15	»
20.	Հանքեր	15	»
21.	Շերամ	10	»

ՇՈՒՏՈՎ ՀՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

2.	Կենդ. հարմարացումը և ձմեռալին քունը		
6.	Բանջարանոց		
7.	Ալգի		
9.	Մարգաղետին		
10.	Ող և ջուր		
14.	Կաթնամթերքներ		
15.	Ընտանի թռչունների խնամքը		
17.	Գյուղատնտ. մեքենաներ և գործիք-ներ		
18.	Ակվարիում և տերրարիում		
19.	Ի՞նչպես կազմել հերթարիում		
22.	Անտառ		